քին մի մի 'ի նոցանէ առանձին ըստ կարծեաց իւրեանց մուծին աղանդս , և 'ի սոցանէ եղեն սուտ քրիստոսք , մարգարէք և առաքեալք · զի բաժանեցին զհաւասարութիւն եկեղեցւոյ բանիւք ապականութեան զոր խօսեցան 'ի վերայ Աստուծոյ և 'ի վերայ Օծելոյ նորա ։ Արդ՝ յետ Ներոնի՝ յարոյց երկրորդ հալածանս կայսրն Դոմէտիանոս՝ կրտսեր եղբայր և պայազատ Տիտոսի (95) ։ Առ սովաւ առան ինչք քրիստոնէից , բազումք աքսորեցան յայլ և այլ տեղիս , արտասահմանեցաւ 'ի Պաղմոս կղզի Ս · Յովհաննէս աւետարանիչ , միայն մնացեալն յԱռաքելոց ։ Ապա ինքնին գրգռեցաւ 'ի վերայ Երրայական ազգին , և հրաման ետ կոտորել զսերունդս Դաւթի , զի մի ոք մնասցէ պայազատ թագաւորութեանն Հրէից ։ Իսկ սուրբն Շմաւոն թէպէտ և երեւելի էր յայնմ ցեղի , այլ վասն ծերութեան և պատուական ալեացն ոչ արարին փոյթ զնմանէ խնդրակք կայսեր , այլ կալան զերկուս եղբօրորդիս Շմաւոնի , որք էին որդիք կամ թոռունք առաքելոյն Յուդայ , և տարեալ կացուցին առաջի Դոմէտիանոսի , և 'ի լինել հարցափորձի անդոսնեցան իբրեւ արք տառապեալք ։

Ի թագաւորել Տրայիանոսի նորոգեցաւ հալածումն եկեղեցւոյ , եւ վերստին յոյզ և խնդիր եղեւ ազգատոհմն Դաւթի ։ Մատնեցաւ ծերունին Շմաւոն 'ի հեթանոսաց և 'ի հրէից աղանդաւորաց ժամանակին յատեան Ատիկոսի կայսերական Հիւպատոսին , փոխանակի բդեշխին Ասորւոց նստեալ յԵրուսաղէմ , և մատուցեալ զնա դատաւորին 'ի տանջանս ստիպէր ուրանալ զՔրիստոս , իսկ նա համարձակ քարոզէր զնա , արկաւ 'ի բանտ տանջեալ 'ի սով և 'ի ծարաւ ։

Իբրեւ կամեցաւ արձակել զնա Հիւպատոսն , ոսոխք նորա պնդադոյնս սկսան չարախօսել զնմանէ , և աղաղակէին տալ զնա 'ի մահ խաչի · վասն որոյ հրաման ետ իշխանն , զի ըստ օրինակի առաջնորդին իւրոյ 'ի խաչ բեւեռեսցի ։ Եւ այնպէս կատարեցաւ ծերունին Շմաւոն 'ի տանջանս Խաչին յԵրուսաղէմ քաղաքի 'ի հասակի իբր 120 ամաց , յետ 45 ամեայ եպիսկոպոսութեանն (108) · և պատուական մարմին նորա ամփոփեցաւ 'ի հաւատացելոց , որոյ տեղին է այժմ անյայտ ։ Վարք Սրբոց Հայր · Ա · 529 ։